**Պատմություն և մշակույթ** 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.182

# The Border and the Map

**Ruben Galchyan**
https://orcid.org/0009-0000-8657-5937
Independent researcher
rgalichian@yahoo.com

**Keywords:** cartography, geography, history, culture, politics, borders, ethnography.

*The article presents how, why, and when borders began to be used, how they are reflected in maps, and what purpose these maps serve.*

*Using specific map examples, the article details how borders were created and what they have served throughout history. Special attention is given to historical maps representing Armenia, as well as Soviet-era maps that demonstrate the alienation of significant territories from the Republic of Armenia in favor of Azerbaijan.*

# Սահմանը և քարտեզը

**Ռուբեն Գալչյան**
Անկախ հետազոտող

**Հիմնաբառեր՝** քարտեզագրություն, աշխարհագրություն, պատմություն, մշակույթ, քաղաքականություն, սահմաններ, ազգագրություն:

*Հոդվածը ներկայացնում է թե ինչպես, ինչու և երբ սկսվեց սահմանների կիրառումը, դրանց արտացոլումը քարտեզներում, թե ինչ նպատակի են ծառայում այս քարտեզները:*

*Կոնկրետ քարտեզների օրինակներով մանրամասնվում են, թե դրանց վրա ինչպես երևան եկան սահմանները, ու պատմության ընթացքում նրանք ինչի են ծառայել: Հատուկ քննության են ենթարկվում Հայաստանը ներկայացնող պատմական քարտեզները, ինչպես նաև խորհրդային քարտեզները, որոնք ցուցադրում են Հայաստանի հանրապետությունից զգալի տարածքների օտարումը հօգուտ Ադրբեջանի:*

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 182-193.

Received: 20.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 19.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

# Граница и Карта

**Рубен Галчян**
Независимый исследователь

**Ключевые слова:** картография, география, история, культура, политика, границы, этнография.

*Статья представляет, как, почему и когда началось применение границ, их отражение на картах и цель этих карт.*

*На конкретных примерах карт детально описывается, как появились границы и чему они служили на протяжении истории. Особому исследованию подвергаются исторические карты, представляющие Армению, а также советские карты, демонстрирующие отчуждение значительных территорий от Армянской Республики в пользу Азербайджана.*

* * *

**Ներածություն**: «Սահման» բառը լսելիս հաճախ պատկերացնում ենք քարտեզ և դրա վրա գծված սահմանային գծեր: Բայց նախ պետք է հասկանալ, թե ինչ սահմանի մասին է խոսքը. անձնական ունեցվածքի՞, քաղաքի թե՞ ինչ որ երկրի կամ մայրցամաքի:

Սահմանների մի մասը տեսանելի է, քանի որ տեղավորվում է տեսողական դաշտում, իսկ ավելի մեծերը՝ քաղաքի ու երկրի սահմանները տեսանելի են միայն թղթի վրա գծված հատակագծերում ու քարտեզներում:

Նույն քաղաքում ապրող ընտանիքները, հաճախ թաղամասերի բաժանման բերումով, կարող են ունենալ մշակութային ու կենցաղային տարբերություններ: Նույիսկ նույն երկրի տարբեր քաղաքներում բնակվողների սննդի և լեզվական մշակույթները կարող են լինել շատ տարբեր: Իսկ ավելի մեծ տարածքների դեպքում կիրառական և անտեսանելի մշակույթի տարբերությունները կարող են լինել շատ մեծ: Այս դեպքերում էլ կարելի է խոսել սահմանների մասին:

Բայց տվյալ դեպքում մեր թեման քարտեզների վրա նշված սահմաններն են: Առկա են մեծ թվով քարտեզներ, որոնց վրա սահմանները գծված չեն: Այս աշխատելակերպն տարածված էր մինչև 14-15-րդ դարերը. սահմանների փոփոխությունները շատ հաճախ տեղի էին ունենում պատերազմների արդյունքում, որոնք շարունակական և կրկնվող իրականություն էին, և քարտեզների վրա դրանք նշելը կարող էր տևել տասնամյակներ, որոնց ընթացքում սահմանները կարող էին նորից փոփոխվել: Ուստի մինչև 15-րդ դար քարտեզների վրա տարածաշրջաներն ընդհանրապես սահմանով բաժանված չէին և տարածքների անվանման համար կիրառվում էին այդտեղ ապրող բնիկ ժողովուրդների անունները:

Աշխարհի հնագույն քարտեզը համարվում է բաբելոնյան կավե «Աշխարհացույցը» (նկ. 1, 2):



Նկ. 1 Բաբելոնյան կավե Աշխարհացույց: Կավե սալիկ:

Նկ. 2 Թարգմանություն:

Այն ներկայացնում է գոյություն ունեցող հնագույն աշխարհացույց քարտեզը՝ թվագրված մ.թ.ա. 6-րդ դարով: Նրա գրությունների թարգմանությունը 1934 թվականին կատարել է գերմանացի Էկհարթ Ունգերը [Unger 1937, 7]: Այս կավե սալիկի կենտրոնում նշված են երեք հնագույն երկրները՝ Բաբելոնը, Ասորիքը և Հայաստանը (Ուրարտու): Այս քարտեզում բացակա են սահմանները և տեղանուններն ու երկրների անունները առնված են շրջանակների մեջ:

Հնագույն քարտեզներից է համարվում Բեդոլինայի ժայռապատկերը (նկ. 3, 4):

Նկ. 3 Ժայռապատկերի լուսանկարը:



Նկ. 4 Քաղաքի պլանը:

Այն թվագրվում է մ.թ.ա. առաջին հազարամյակով, գտնվում է իտալական Ալպերի Քոմոնիքայի հովտի Բեդոլինա շրջանում: Քարտեզը պատկերում է քաղաքի հատակագծի մի հատվածը, ուր երևում են տները, փողոցներն ու այգիները: Այսպիսով ժայռապատկերը ներկայանում է որպես քաղաքային հնագույն հատակագիծ:

Ներկա քարտեզագրության հիմնադիրն է հանդիսանում Կլավդիոս Պտղոմեոսը, ով մ.թ. 2-րդ դարում ղեկավարում էր Աղեքսանդրիայի հնագույն գրադարանը և որտեղ նա շարադրել է իր *«Աշխարհագրություն» (“Geographia”)* աշխատությունը: Նրա քարտեզագրական տեսություններից շատերն օգտագործվում էին մինչև 16-րդ դար:

Մեզ համար կարևոր է նրա՝ 15-րդ դարում վերագծված քարտեզի Միջին արևելքի մի հատվածը (նկ. 5), ուր ներկայացված են Մեծ և Փոքր Հայքերը (ընդգծված կարմիր), Վիրքը և Կովկասյան Ալբանիան (Colchis-Աբխազիա, Albania-Աղվանքը, ընդգծված մուգ կարմիր և կապույտ): Վերջինը տեղադրված է ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում:

Քարտեզ 5. Հատված Պտղոմեոսի Աշխարհացույց քարտեզից, երկրորդ դար [Claudius Ptolemaeus. Geogrpahia. British Library, Ref. Maps C. 1. d. 9.]:

Սակայն, ինչպես նշվեց, ժամանակին երկրները սահմաններով բաժանված չէին, և տարածքները ներկայացվում էին իրենց բնիկ ժողովուրդներին պատկանող անվանումներին համապատասխան անուններով:

Այստեղ առկա է նաև Պարսկական կայսրության մեկ մասի *Մեդիա* անվանումը (ընդգծված կանաչ), որը հետագայում վերանվանվեց Պարսկաստանի Ատրոպատեն-Ատրպատական նահանգ:

Առաջին դարի հույն աշխարհագրագետ Ստրաբոնը, ով ճանաչված է որպես աշխարհագրության հիմնադիր, իր 17 հատորանոց «*Աշխարգհարգրություն*» աշխատանքում 60 պարբերություն է նվիրել Հայաստանին, իսկ Աղվանքի մասին գրում է, որ այստեղ ապրում են 26 ցեղեր, որոնցից ամեն մեկը խոսում է իր հատուկ լեզվով, և նրանք իրար հետ անկարող էին հաղորդակցվել:

Իսպանացի վանական Բեատուսի *Աշխարհացույց* քարտեզը (նկ. 6), որ վերաբերում է 8-րդ դարին, գծված է ըստ քրիստոնեական պատկերացումների, ըստ որոնց աշխարհը տափակ սկավառակի տեսք ունի և շրջապատված է աղի ջրերով: Քարտեզում արևելքը տեղադրված է վերևում, որտեղից բարձրանում է արևը և ուր նաև գտնվում է Երկրային Դրախտն իր չորս դուրս հոսող գետերով: Երկրի սկավառակը տիեզերքում կախված պահում են քարտեզում ներկայացված չորս քամիները:

Քարտեզ 6. Լիբենացի Բեատուս վանականի Աշխարհացույց, 8-րդ դար [Beatus of Liebana. Apocalipsin. Biblioteca Nazionale Universitaria, Turin, Italy, MS. I.II.1, fols. 38v-3]:

Շրջանի վերևի կեսն Ասիան է, ներքևի ձախում Եվրոպան է, իսկ աջում՝ Աֆրիկան: Քարտեզի վերը Կովկասյան լեռների և դրախտի մոտ նշված է Հայաստանը (ընդգծված կանաչ): Ադրբեջանը գոյություն չունի, իսկ մյուս երկրներն էլ սահմաններ չունեն: Հասարակածը նշված է ուղղահայաց

կարմիր գծով, որից հարավ գտնվող տարածքը՝ ըստ Սուրբ գրքի, խիստ շոգի պատճառով անմարդաբնակ է:

Մեր թեմայի համար հաջորդ կարևոր քարտեզը (նկ. 7) իսլամական քարտեզագրության մեծերից՝ ծագումով պարսիկ աշխարհագրագետ Աբու Իսհաղ Իսթախրիի *Գիրք քաղաքների և ճանապարհների մասին* աշխատությունից է: Նրա աշխարհագրական երկերը պարունակում են 19-21 քարտեզ, որոնցից մեկն *Աշխարհացույցն* է: Քանի որ իսլամի սուրբ քաղաք՝ Մեքքան իսլամական երկրների մեծ մասից հարավ է գտնվում, ապա իսլամական քարտեզներում հարավը ուղղորդված է վերև:

Քարտեզ 7. Իսթախրիի Իսլամական Աշխարհացույց քարտեզ, 10-րդ դար [Abu Ishaq al-Istakhri, Kitab ul-Masalek va al-Mamalek. Oriental Institute, Sankt Peterburgh]:

Քարտեզում ձախի կապույտ տարածքը Հնդկական օվկիանոսն է, իսկ աջինը՝ Միջերկրական ծովը: Միջերկրականի ու գնդաձև ներկայացված Կասպից ծովերի միջև տեղադրված է Հայաստանը, որը նշված է որպես *Էրմանիյե*: Այս իսլամական քարտեզում ևս երկրների սահմանները չեն նշվում:

Ձախի կապույտ բոլորակը Արալի լիճն է, որի մեջ են թափվում Ամուդարյա և Սիրդարյա գետերը:

Երբ ցարական Ռուսաստանը 1828 թ. գրավեց ամբողջ Հարավային Կովկասը, նոր տարածքը տրվեց Թիֆիլիսում տեղակայված Փոխարքային և նրա նշանակած վարչությանը: Հաջորդող 100 տարիների ընթացքում *Անդրկովկասյան* տարածքի վարչական բաժանումները բազմազան փոփոխությունների են ենթարկվել առնվազն ութ անգամ:

Այդ շրջանների կամ նահանգների ու գուբեռնիաների սահմաններն ու անվանումները փոփոխվում էին լոկ վարչական նկատառումներով, որոնց մեջ որևէ դեր չունեին դարեր գոյություն ունեցած տարածքային սահմանները, բնիկ ժողովուրդների առկայությունը, նրանց ազգագրական, լեզվական և կրոնական տարբերությունները և այլն:

Այդ ժամանակի քարտեզներից մեկի վրա, օրինակ (նկ. 8) առկա են Դաղստանի զինվորական շրջանն իր Կուբայի, Բաքվի գավառներով, Մուսուլման զինվորական շրջանն իր Ղարաբաղ, Շիրվան, Շեքի ու Թալիշ գավառներով և Հայաստանի, Վրաստանի ու Իմերեթիայի գավառները: Տաս տարի անց սրանց բոլորի սահմաններն ու անվանումները փոխվել էին: *Գավառ* անվան փոխարեն տեղ են գտել գուբեռնիա-նահանգ անվանումները: Այս պարբերական փոփոխությունները շարունակվեցին մինչև 1915 թ.:

Քարտեզ 8. Ռուսաստանի գրված Անդրկովկասի բաժանումները [Arthur Tsutsiev. Atlas of the Ethno-Political History of the Caucasus. Yale University Press, 2014, 19]:

Հաջորդ քարտեզը (նկ. 9) պատրաստել է օսմանյան ռազմական նախարարությունը՝ ցույց տալու Ռուսաստանի հետ ունեցած պատերազմի շրջանները: Այստեղ *Հայաստան* անունը տրված է հյուսիսում՝ *Էրզրումը*, հարավում՝ *Վանա լիճն* ու *Բիթլիսը*, արևմուտքում՝ *Մալաթիան*, արևելքում՝ Արևելահայաստանի *Սևանի* շրջանը: Այսինքն՝ Հայաստանը տեղադրված է Օսմանյան և Ռուսական կայսրությունների գրված տարածքներում՝ *Արաքսի* երկու ափերին: Իսկ *Ադրբեջան* անվանումը տրված է Իրանի Ատրպատական նահանգին: Վրաստանը և Դաղստանը Հայաստանից հյուսիս և հյուսիս-արևմուտք են գտնվում: Ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքն անվանված է *Շիրվան*, որը ժամանակին այս տարածքի հանրաճանաչ անվանումն էր: Կարմիրով գրվածը Օսմանյան կայսրության անվանումն է:

Քարտեզ 9. Օսմանյան Ռուս-Թուրքական պատերազմի քարտեզ, 1877 թ. [Մատենադարան, Երևան, Ռուբեն Գալչյանի ֆոնդ, ՌԳ-191]:

Բեռլինի 1878 թվականի վեհաժողովում Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերի ճակատագիրը մնաց իրար հետ հակասություն ունեցող եվրոպական պետությունների հայեցողությանը: Որպես հատուցում՝ Օսմանյան կայսրությունը Մեծ Բրիտանիային հանձնեց Կիպրոսը, որտեղ Բրիտանիան նպատակ ուներ հիմնելու ռազմական հենակետ: Ի վերջո սուլթանն ու Դիզրայելին հայերի արյան գնով լուծեցին իրենց խնդիրները: Որպես հայկական պատվիրակության ղեկավար՝ Խրիմյան Հայրիկը ևս մասնակցեց վեհաժողովին, որից նա վերադարձավ հուսախաբ և ձեռնունայն:

1918-20 թթ. կարճատև անկախությունից հետո, երբ Հայաստանը միացավ բոլշևիկյան Ռուսաստանին, երկրի տարածքը շուրջ 43.000 քառ. կմ էր (նկ. 10): Սակայն սահմանն այսպես երկար չմնաց: 1921 թ. Կարսի և Մոսկվայի պայմանագրերով Կարսի, Իգդիրի, Սուրմալուի և Արարատի շրջանները հանձնվեցին Թուրքիային, այն հույսով, որ Թուրքիայի հետ ստեղծվեն սերտ բարեկամական կապեր և հարաբերություններ սոցիալիստական Ռուսաստանի հետ:




Քարտեղ 10. Անկախ Հայաստանի տարածքը 1920 թ. Վերջերին [Rouben Galichian, Armenia and its Borders, Antares, Yerevan 2024, 60-61]:

Արդյունքում Ռուսաստանի աջակցությամբ Թուրքիան առանց պատերազմի, միմիայն իր դիվանագիտության շնորհիվ շահեց տարածքներ՝ դրանով հանդերձ իրեն հեռու պահելով սոցիալիստական կարգերից:

Կարմիրով նշված Նախիջևանի տարածքին տրվեց *Անկախ Շրջան* անվանումը, և Մոսկվան տարածքը նվիրեց Սովետական Ադրբեջանին: Կապույտով նշված տարածքը Ադրբեջանի իշխանությունները 1920 թ. նոյեմբերի 30-ին հանձնեցին Հայաստանին: Սակայն յոթ ամիս անց Կովկասյան Բյուրոն որոշեց Լեռնային Ղարաբաղը ևս հանձնել Ադրբեջանին:

Հաջորդ քարտեզը ներկայացնում է Հայաստանը և Արցախը 1985 թ. (նկ. 11): Այստեղ կապույտով նշված են 1925-1940 թթ. տարբեր պատրվակներով Հայաստանից վերցված և Ադրբեջանին տրված տարածքները: Դրանք Ադրբեջանին հանձնելու հիմնական պատրվակն այն էր, որ Արցախի և Հայաստանի միջև Ադրբեջանը ծրագրում էր ստեղծել *Կարմիր Քրդստան* գավառը, ուր պետք էր տեղափոխվեին Ադրբեջանի տարբեր շրջաններում բնակվող խաշնարած քրդերը՝ շուրջ 34,000 մարդ:

Քարտեզ 11. Հայաստանի տարածքը 1985 թ.

Ըստ Ադրբեջանի՝ քրդերին հատկացվելիք տարածքը լինելով լեռնային, խաշնարածների համար չուներ բավարար արոտավայր, որոնք, սակայն, առկա էին Հայաստանի տարածքում: Այս նկատառումով ժամանակի Անդրկովկասյան դաշնությունը, որի կազմի մեջ էին Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը, տարբեր նիստերի որոշումներով Ադրբեջանին է հատկացրել ավելի քան հազար երկու հարյուր քառ. կմ դաշտ ու արոտավայր՝ քուրդ խաշնարածների ապրուստն ապահովելու նպատակով: Այս տարածքների հանձնումները հաճախ կատարվել են առանց նույնիսկ տեղաբնակների գիտության [Galichian 2024, 68, 70-73]:

Տարածքներ են հանձնվել Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերից: Բացի դրանցից, Հայաստանի տարածքում ստեղծվել է երեք ադրբեջանական անկլավ, իսկ Արծվաշենը, որը 1927 թ. դեռ Հայաստանի տարածքում էր, հանձնվել էր Ադրբեջանին որպես հայկական անկլավ՝ Ադրբեջանի տարածքում [Galichian 2024, 74-81]:

Եթե նայենք 1926 թ. Հայաստանի քարտեզին (նկ. 12), ապա տեսանելի է որ դրա վրա Ադրբեջանի սահմանն անցնում է քարտեզի վերին մասում բաց կանաչ գույնով նշված գետի ուղղությամբ, իսկ քարտեզի վրա նշված երկու անկլավները, ինչպես նաև մյուս անկլավը, 1926-ի քարտեզում ընդհանրապես բացակա են:

Քարտեզ 12. Տավուշի շրջանի սահմաններն ու ճանապարհը:

Տավուշի երկու հյուսիսային անկլավները հայտնվեցին 1936 թ.: Ինչպես տեսնում ենք, Բարխուդարլու կոչված նորաստեղծ անկլավը հատում է Հայաստանի M-4, Իջևան-Ղազախ տանող մայրուղին, իսկ ավելի մեծ Ասկիպարա անկլավը Ոսկեպարից արևմուտք է և ընդհանրապես ճանապարհի վրա չէ, սակայն վերահսկում է ճանապարհը:

Այս «պակասությունը շտկելու» նպատակով վերոբերյալ քարտեզում նշված երկու սեպաձև՝ համարյա անմարդաբնակ հողամասերը Հայաստանից վերցվել ու տրվել են Ադրբեջանին, որպեսզի Հայաստանի M-16 մայրուղին պարտադիր հինգ անգամ հատի Ադրբեջանի սահմանը և ամեն անգամ մի քանի հարյուր մետր անցնի Ադրբեջանի տարածքով:

Այսպիսով, հիմնելով Բարխուդարլուն, նաև հողամասեր տալով Ադրբեջանին՝ ԽՍՀՄ-ը վստահ է լինում, որ Հայաստանի հյուսիսային՝ դեպի Վրաստան և Ադրբեջան տանող մայրուղիները կարող են լինել Ադրբեջանի անմիջական հսկողության ներքո:

Կատարված փոփոխություններով հայկական *Ոսկեպար* գյուղը մնում է Ադրբեջանի և ադրբեջանական անկլավ *Ասկիպարայի* կողմից շրջափակված մի նեղ պարանոցի մեջ:

Հաջորդ քարտեզը (նկ. 13) հատված է 1970 թ. Խորհրդային զինվորական Գենշտաբի պատրաստած Շուռնուխի շրջանի քարտեզից, որն ըստ ԽՍՀՄ օրենքի, պահպանվում է գաղտնի: Սակայն այսօր սրանք հասանելի են համացանցում: Քարտեզի վրա գունավորված են սահմանն ու ճանապարհը: Դեղինով նշված են երկու երկրների սահմանը հատող կետերը:




Քարտեզ 13. Գորիսից Կապան ճանապարհի զինվորական քարտեզ:

Այստեղ Ադրբեջան-Հայաստան սահմանը ցույց է տրված կապույտով, որը գծվել է Խորհրդային Միության կարգադրությամբ: Սահմանը այսպիսին է եղել դեռ 1930-ական թվականներից: Իսկ Հայաստանի M-2 մայրուղին կառուցվել է 1953-1960 թթ., որը նշված է կարմիրով:

1970 թ. զինվորական մանրակրկիտ քարտեզից պարզ երևում է, որ *Գորիսից Կապան* մայրուղու հատվածը սկզբում մտնում է Ադրբեջանի *Էյվազլու* գյուղի տարածքը՝ անցնելով ավելի քան տաս կիլոմետր, ապա վերադառնում Հայաստան, և մի քանի անգամ սահմանը հատելով՝ շարունակում դեպի *Շուռնուխ*:

Քարտեզի վրա մայրուղու սահմանի հատման տեղերը նշված են դեղին սլաքներով: Իսկ Շուռնուխում սահմանն ուղղակի անցնում է գյուղամիջի ճանապարհով, որի կենտրոնական սպիտակ գծի մեկ կողմը *Հայաստանն* է, իսկ մյուսը՝ *Ադրբեջանը*. այսպես գյուղը բաժանվում է երկու մասի:

Սա էլ այն միջոցներից է, որով Խորհրդային Միությունը Հայաստանի մայրուղին թողել է Ադրբեջանի հսկողության տակ, սակայն մինչև վերջերս հանրության համար տպագրված բոլոր քարտեզներում ցույց է տրվում, որ հայկական M-2 մայրուղին ամբողջովին անցնում է Հայաստանի սուվերեն տարածքով, որն իրականությանը չի համապատասխանում:

Վերջերս Ադրբեջանի հրատարակել է իր նկրտումները հայկական հողերի հանդեպ (նկ. 14), որոնք 1918 թ. ծնունդ առած և հազիվ հարյուրյակը լրացրած Ադրբեջանի Հանրապետությունը հայտարարում է որպես իր «պատմական» հողերը:

Քարտեզ 14. Ադրբեջանի նկրտումները հայկական հողերի հանդեպ:

## Գրականության ցանկ

**Abu Ishaq al-Istakhri,** *Kitab ul-Masalek va al-Mamalek*. Oriental Institute, Sankt Peterburgh.

**Beatus of Liebana.** *Apocalipsin*. Biblioteca Nazionale Universitaria, Turin, Italy, MS. I.II.1, fols. 38v-3.

**Galichian R. 2024,** *Armenia and its Borders*, Antares, Yerevan.

Ptolemaeus C., *Geogrpahia*. British Library, Ref. Maps C.1.d.9.

**Tsutsiev A. 2014,** *Atlas of the Ethno-Political History of the Caucasus*. Yale University Press.

**Unger E. 1937,** From the Cosmos, *Imago Mundi*, Vol. 2, 7.

Մատենադարան, Երևան, Ռուբեն Գալչյանի ֆոնդ, ՌԳ-191:

Մատենադարան, Երևան, Ռուբեն Գալչյանի ֆոնդ, ՌԳ-68, 70-73:

Մատենադարան, Երևան, Ռուբեն Գալչյանի ֆոնդ, ՌԳ-74-81: